Ահաւասիկ անցեալ Թուով հրատարակել խոստացուած և Ասպահանէն խրկուած Յայտարարութիւնը:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### ԱՌ ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ ՈՐ Ի ՋՈՒՂԱ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆ·

Փութամ հոգեւանդն յօժարութեամբ զբաղձանս սրտի և զնպատակ իմ մերկապարանոց առնել սովաւ առաջի լրութեան պատուելի համազգեացդ իմոց։ Ապաքէն ըստ ընտրութեան Տեառն ի կոչելս իմ ի կարգ կուսակրօն քահանայութեան և ի պաշտօն վարդապետութեան, անգէն ընկալայ նաև զարժանին պատուէր երկնաւոր վարդապետին մերոյ Յիսուսի ի թողուլ և ի տալ զհրաժեշտ յամենայն ընչից աշխարհի, որպէս ասէ, ,, Որ ոչ հրաժարեսցի յամենայն ընչից իւրոց՝ ոչ կարէ իմ աշակերտ լինել ,, . Ղուկ ԺԴ. 33։ Սակայն յետ ստանձնելոյ իմ զնոյն լուծ խոնարհութեան առ եկեալ աղքատացեալ հոգւով ի կամս և յօժարութեամբ, ոչ այնու անտես արարեալ լքին զիս ձեռք մարդասէր նուիրատուաց, այլ արժանի համարեալ մշակականն վարձու՝ հետզհետէ առանձինն պարգևօք պատուեալ են զիս ի վայելս։ Արդ՝ զոր ինչ ի ձրիատուր նպաստս գտեալ է իմ ի բարեպաշտութենէ ժողովրդոց մերոց, զնոյնն՝ զանձեալ որպէս Հայր հոգևոր, վերստին նուիրեմ սիրով մանկանց Ազգիս ի բարգաւաճութիւն մտաւորական և զրաւորական ուսմանց նոցա ըստ յետագայ ուխտիս։

Նախ տեսանելով՝ զի սակս յարատևութեան և պայծառութեան Եկեղեցւոյ յոյժ կարևոր է Դպրոց մի որ որպէս դայեակ ջամբեսցէ Հայացի մանկտւոյ զկաթն աստուածպաշտում գիտութեանց, որով և կրթեալ պատրաստեսցէ զքաջուսում պաշտօնեայս և անդամս, առ ի յաջորդաբար պահպանել զգոյութիւնս Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայութեան։ Անշուշտ խոստովանիմք զխորալի բարերարութիւնս Ազգասիրաց եղելոց ի Հնդիկս, որք վաղուց բեմն զայսպիսի հոգ յանձին կալեալ կառուցին աստ ի Ջուղա զշքեղին Դպրոցս վասն երկու սեռից մանկանց Ազգիս, յորս ըստ գոյին չափ գտանեն մանկունք զմիջակ հմտութիւնս ուսմանց. այլ զի որպէս տղայք ի հասանել ի չափ հասակի՝ վայելել ախորժեն զհաստատուն կերակուրս համեղամ, այսպէս և ըստ հանգամանաց ժամանակիս զեռանդն ուսումնասիրութեան հարեալ աստ, ուստի ոչ միայն զՀայկազեան և զՊարսկականն լեզուս՝ այլ և զեւրոպացւոցն թեւակոխել նկրտեն Հայորեայք, նա զի ընդ բանալ արժանավայել Դպրոցիս և ընդ յաճախել անդ բազմադէմ հրահանգաց լեզուագիտութեանց ի ձեռն քաջակիրթ ուսուցչաց նա մանաւանդ յընդունել ուրանօր զմատաղերամ որբս և զաղքատս գիշերօթեայս՝ բազմապէս պարտին յանժամ նիւթական պիտոյք և ծախք այնր Դպրատան. վասն որոյ ես զառաջինն յօժարակամօք հաճիմ տալ և նուիրել յանուն նորահաստատ Հոգևոր Դպրոցի Նորոյս Ջուղայու՝ ըզգումարն (4200) չորս հազար երկու հարիւր կումպանւոյ ռուփեաց, որ է (10080) տասն հազար և ութսուն Պարսից ղռանիք, առ ի առաքել և զետեղել զյիշեալ գումարն ի Կալկաթա ի ներքոյ կումպանւոյ գրամաթղթոց Տէրութեանն Անգղիոյ և զորոյ տարեկան արդիւնս ամ ըստ ամէ ստացեալ՝ բերել աստ ի նպաստ ծախուց վերյիշեալ Հոգևոր Դպրոցին։

Երկրորդ՝ առնելով զհաստատուն Կտակ յօրում խոստացեալ իսկ եմ, որպէս և այսու թղթովս ուխտեմ տալ և ընծայել վերյիշեալ Հոգևոր Դպրոցին զայլ ամենայն արդիւնս ունեցեալ և զապագայ գտեալս անձնական ստացուած դրամոց, զգեստուց, գրենւոյ և այլոց արդեանց իմոց՝ զայն ամենայն բովանդակապէս նուիրեմ այնր Դպրոցին, այլ միայն վասն իմոյ թաղման և յուղարկաւորութեանս թողում բաժին զգումարն (50) յիսուն թումանաց, այն է հինգ հարիւր Պարսից ռուփիք ի վերստացուածոցս, առ ի վճարել նուազ զպարտուպատշաճ պիտոյս և զկարգ թաղման ցտարելիցն զկնի մահուան իմոյ։

Երրորդ՝ ըստ որում արդէն իսկ առաջարկեալ տեսանեմ զբարենպատակ ճիգն Ազգասիրութեան ի մէջ պատուեալ մերազնէից Ջուղայոյ յաղագս նորակառոյց Հոգևոր դպրոցի, ուստի ի բաց որո-

չել և ի տալ ի գումարաց դրամոց իւրաքանչիւր եկեղեցեացն Ջուղայ ըստ գոյիցն կարօղութեանց անոր և յայլ Ազգային Նպաստից՝ և արձանագրեալ զբովանդակութիւն գումարոյն ի մէջ ժապաւինեալ և կնքեալ Տոմարըս յանուն Հոգևոր դպրոցին, զոր և առաքել՝ ի Կալկաթա առ ի ապահովել ընդ վաշխաբեր դրամաթղթովք Տէրութեանն Անգղիոյ, և զորոյ արդիւնս ամ ըստ ամէ բերեալ մատակարարել ի պէտս այնր դպրոցին ուստի և ես զվերխոստացեալ չորս հազար և երկու հարիւր կումպանւոյ ռուփիս կցորդել խնդրեմ ընդ հանգանակեալ գումարս դրամոց տուելոց ի սրբոց Եկեղեցեաց՝ և յայլ Ազգային Նպաստից, զորս և թողուլ և յանձնել ի ձեռն խնամակալութեան նորընտիր կառավարութեան Հոգևոր դպրոցին։

Չորրորդ՝ յետ գոյիւ չափ նպաստամատոյց լինելոյս Հոգևոր դպրոցին հաստատելոյ Տէրամբ ի Ջուղա՝ ըղձամ նաև Նուիրական պարտաւորութեամբ անձնանուէր հանդիսացեալ մատուցանել զանձանձիր ծառայութիւն իմ առ ի լրումն ածել զթերութիւն ձեռնարկեալ գործոյն վերոյիշեալ դպրոցի ի յարատեւութիւն հաստատութեան այնր, որոյ վասն կամ է ինձ ելանել գնալ ի կողմանս Հնդկաստանի ի խնդիր առատապարգև օժանդակութեան ի պէտս հաստահիմն կառուցման և մշտնջենաւորութեան Հոգևոր դպրոցին զայսպիսի ամենակարևոր անօրէնութիւն իմն, անշուշտ եմ՝ զի Գերապատիւ Գրիգորիս Արքեպիսկոպոս Առաջնորդն մեր բարեհաճեսցի առնել յօգուտ և ի յառաջադիմութիւն Հայ սերնդոց Ջուղայ։ Նմանապէս հաւատի եմ՝ զի և պատուելի Անդամք Հասարակութեանս մերոյ թելադիր ունիք լինել ինձ, և թեկն ածել խորհրդակցութեան ի ձեռնարկեալ յայս գործ աստուածահաճոյ. վասն այնորիկ և ես թարց ուրուք ծանրանալոյ խոստանամ՝ հոգալ յինէն զճանապարհորդական ծախսն իմ առ ի ցԲուշեռ, և այն ինչ գնացեալ ի Հնդկաստան ըստ յաջողելոյ Տեառն խնդիր արարից նախ յամենաբարեպաշտ համազգեաց անտի աջակցել մարդասիրական նպաստիւք Հոգևոր դպրոցին Ջուղայ, ըստ այսմ և յայլազգ մարդասէր քրիստոնէից, և յայլոց թախանձանօք ընկալայց զօգնականութիւնս դրամոց, զորս և մի ըստ ըստ միոջէ ի գրի արարեալ ի վեր ասացեալ ժապաւինեալ Տոմարին և զգումարն հանգանակութեան յանուն Հոգևոր դպրոցին, Նա խոկ և զանձնական ստացեալս իմ տուրս ինձ, որ ասի Գաւազանապատուղ, զնոյն ևս բարդեալ ի վերայ այնր գումարաց՝ յանձնելոց եմ բովանդակապէս ի ձեռն Նորահաստատ Գործակալաց անտի կարգելոց ի ձէնջ, ի զետեղել և ապահովել զգումարըն հանգանակութեան ինքեանց կումպանւոյ դըրամաթղթոց Տէրութեանն Անգղիոյ։ զկնի Աստուծոյ ցանգաւօրելոյ զխնդիրս, ունիմք համաբարդել՝ զի ի Ջուղայէ առաքեալ գումարն ընդ հանգանակեալ գումարոյն Հնդկաստանի ի մի վայր ապահովելով յանուն Հոգևոր դպրոցին Ջուղայ՝ յայնժամ նախախնամութեամբն Աստուծոյ և Նուիրաբերութեամբ բարերարաց Ազգիս՝ հաստատեսցի Նորակառոյց Հոգևոր դպրոցն Ջուղայ, որ և սիրաշաղկապ յարաբերութեամբ լծակցեալ ընդ չորեսին Ազգային վարժարանս Ջուղայ, որպէս զի ի միասին մարթասցին ըստ արժանւոյն մշակել զմիտս Հայկական սերնդոց գըրաւորական և բարոյական ուսմամբ և դաստիարակել զնոսա լուսաւոր և վսեմ գաղափարիւք կրօնական և արտաքին գիտութեանց, զորս և Աստուած աճեցուսցէ և պտղաբերեսցէ ի փառս անուան իւրոյ. ամէն։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ—ՓՈԽԱՆՈՐԴ

ԽԱՉ. ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ի 1875 ամի ի 15ն Յունուարի,

Ի Ջուղա.

Աստանօր կցեմք հանգանակութեան ցուցակը ևս։

Հաշիւ հանգանակութեան նպաստից յանուն առաջարկելոյ Ազգային Հոգևոր դպրոցին Ջուղայու հաւաքելոց ի Հայոց հասարակութենէն Ջուղայու ի 1875 ամի։

| | Դր. Շհ. |
|---|---|
| Խաչատուր Վարդապետ . . . | 10080 |
| Մկրտիչ Հ. Խաչկեանց . . . | 40 |
| Մարիամ Մ. Հ. Խաչկեանց . . | 10 |

| | |
|---|---|
| Ա. Ս. Սարգիս Ամիրչեանց | 10 |
| Առաքել Ծ. Արգարեանց | 40 |
| Բարսեղ Կ. Բարսեղեան | 20 |
| Աբրահամ Գ. Տէր Խաչատրեան | 5 |
| Գրիգոր Քահ. Տէր Մարգարեան | 20 |
| Մարտիրոս Քահ. Գ. Ծ. Արգարեան | 30 |
| Ղուկաս Դաւթեան | 5 |
| Մկրտիչ Քահ. Կ. Սիմէոնեան | 10 |
| Ծածան Տէր Աբրահամեան | 5 |
| Սառրայ Պետրոսեան | 2 |
| Մուրասայ Ափշալեան | 10 |
| Բալասան Մատթէոսեան | 10 |
| Սիմէոն Աւետիքեան | 10 |
| Գոհար Մկրտում Գ. Յովակիմեան | 2 |
| Խաթուն Մինասեան | 10 |
| Մէրջան Յ. Սէթեան | 1 |
| Մարգարիտ Ղազարեան | 10 |
| Ստեփաննոս Խ. Ստեփաննոսեան և Ծաղիկ Ստեփաննոսեան | 20 |
| Կատարինէ Մ. Ծատուրեան | 2 |
| Մկրտիչ Յովհաննէսեան | 2 |
| Աննա Ս. Յովհաննէսեան | 2 |
| Մինաս Աբրահամեան և Մայիլ Մինասեան | 2 |
| Բէգում Յ. Կոստանդեան | 2 |
| Թագուհի Գալստեան Յ. Կոստանդեան | 2 |
| Մայիլ Յովհանջան Արգարեան և Գրիգոր Յ. Արգարեան | 10 |
| Վարդենի Մինաս Խաչկեան | 32 |
| Յովհաննէս Ս. Գ. Արգարեան | 1 |
| Մարիամ Ստեփաննոսեան և երկու որդիքն իւր | 20 |
| Աւետիք Դ. Մանուկեան և իւր կողակից | 4 |
| Բէգում Դ. Մանուկեան | 5 |
| Խաչխաթուն Տէր Ոնթէոսեան Դ. Մանուկեան | 10 |
| Մարիամ Տէր Ներսէս Յորդանանեան | 5 |
| Վարդենի Յակովբջանեան | 2 |
| Մըստր Փէյն | 10 |
| Սորա Խաթունն | 10 |
| Վէլի Մանուկեան և իւր կողակից | 100 |
| Եղիսաբէթ Տէր Մարտիրոսեան Գ. Ծ. Արգարեան | 10 |

| | |
|---|---|
| Մկրտիչ Մատթէոսեան | 3 |
| Մկրտիչ Միրզաբէգեան | 15 |
| Ոսոսփանայ Տէր Գրիգորեան Տէր Մարգարեան | 20 |
| Սաթին Տէր Գրիգորեան Տէր Մարգարեան | 5 |
| Խաչատուր Ղազիխանեան | 5 |
| Բալասան Գ. Յովհաննէսեան | 2 |
| Եղիազար Ս. Ստեփաննոսեան | 3 |
| Մէլքում Շուքուր Յովհաննէսեան | 2 |
| Սառրայ Հայրապետեան Յակովբջանեանց | 3 |
| Յակովբ Հ. Յակովբջանեանց և ամուսինն | 10 |
| Դաւիթ Յակովբջանեանց | 1 |
| Աննա Դաւիթ Աբրահամեան | 1 |
| Խանիլար և Նազարէթ, Աննա Եղն. Տէր Գալստանեան | 30 |
| Մկրտիչ Յ Արգարեանց | 5 |
| Եղիա Յովսէփեան և Սառրայ Յովսէփեան | 2 |
| Հայրապետ Ղազիխանեան | 3 |
| Ծաղիկ Ա. Աբրահամեան և իւր մայրն | 3 |
| Մարիամ Տ. Գ. Տէր Բարսեղեան | 20 |
| Յովակիմ Ղազիխանեան | 3 |
| Սառրայ Յովհաննէսեան | 2 |
| Վարդխաթուն Յակովբեան | 10 |
| Սարգիս Ս. Գալստանեան | 5 |
| Մարիամջան Տէր Իսահակեան | 50 |
| Գալստան Աբրահամեան | 10 |
| Խաթուն Ղազար Գ. Արգարեան | 10 |
| Զաքարիա և Յարութիւն Յովսէփեան | 2 |
| Կատարինէ Դաւթեան | 5 |
| Խօսրով Մարկոսեան | 10 |
| Սեղբեստրոս Քահ. Յովհաննէսեան | 40 |
| Գրիգոր Տէր Սեղբեստրոսեան | 10 |
| Մինաս Իսագուլեան | 5 |
| Վարդենի Մինասեան | 2 |
| Խաթուն Դաւթեան | 2 |
| Յովսէփ Դաւթեան | 2 |
| Ովսաննայ Յովսէփեան | 2 |
| Ղազար Յովսէփեան | 2 |
| Սարգիս Աստուրեան | 4 |
| Իսրայէլ Աղազարեան և իւր տիկինն և հարսն | 10 |

Կատարինէ Սահակեան . . . 1
Մաշտցի Աբրաս Մահմետական . 15
Յովսէփ Ղեւոնդեան եւ իւր կինն . 10
Տիրուհի Մարիամ Տէր Յովսէփեան .
եւ իւր որդիքն . . . 30
Մարգար Սիմէոնեան եւ իւր տիկինն . 20
Ներսէս Վարդանեան . . . 1

(Մնացեալն է յետագայ):

## ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ
## ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ
## ԵՒ
## ՏԱՐԵԴԱՐՁ
## Ս. ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ.

Ի 27-ն ամսոյս՝ յաւուր Շաբաթու՝ ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի Անուան տօնախմբութիւնը եւ Ս. Գէորգեան ճեմարանի առաջին Տարեդարձը արժանաւոր հանդիսիւ կատարուեցաւ:

Այս առթիւ՝ զկնի Ս. Պատարագի՝ ի ճեմարանի կատարուած հանդիսի*) ժամանակ՝ Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանցի,— որ եւ ի նոյն աւուր Պատարագիչ եղաւ, — կարդացած հետեւեալ պատուական եւ ուշադրութեան արժանի ճառը արժան եւ կարեւոր կհամարիմք հրատարակել:

(*) Ուր եւ Պաշտօն կատարուեցաւ վասն հոգւոց ի Տէր հանգուցեալ ծնողաց հիմնադրի ճեմարանիս Վեհ. Հայրապետի, եւ ամեն տարի պիտի կատարուի:

### ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ.

«Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ».

Բոլորեցաւ ահա տարի մի ողջոյն, յորմէ հետէ Ձերում փոյթեռանդն խնամակալութեամբ եւ Հայրապետական օրհնութեամբ, եւ բարեհաճ հրամանաւ Օգոստափառ Կայսեր ամենայն Ռուսաց, կատարեցաւ բազմապայծառ հանդիսիւ բացումն Ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի ի մխիթարութիւն Հայաստան ժողովրդոց՝ հրաւիրելոց առ ի Ձերմէ իմաստութենէդ բարձր քարոզութեամբ ի վայելումն հոգեկան եւ մտաւորական խրախճանութեանց՝ զորս պատրաստէ Աջ Ձեր ի նորակառոյց տաճարիս՝ «Օրհնեսցի՛ ուրեմն, Վեհափառ Տէր, պսակ տարւոյ քաղցրութեան քոյ»։

Այս պսակ շքեղաշուք՝ ոչ յոսկւոյ եւ յարծաթոյ եւ յականց պատուականաց շարահիւսեալ փայլէ ի ճակատ մերոյ Վեհապետիդ, այլ ի Ձերմէ ճաճանչագեղ հաւատոյ Հարցն մերոց առաջնոց, յանդրդուելի յուսոյ ի նախախնամութիւն Բարձրելոյն եւ ի յեռանդագին սիրոյ առ Աստուած եւ առ ազգս մեր. պսակ արդարեւ յոյժ վայելչական ի զարդ Գլխոյդ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ Փոխանորդի ճշմարիտ Գլխոյն Ընդհանրական Եկեղեցւոյ՝ Քրիստոսի Յիսուսի Փրկչին մերոյ. որոյ վասն արդեօք եւ ոչ անմասն ի փշատիպ չարչարանացն խոցուածոյ . . . Սակայն օ՛ն անդր ի բաց մերժեսցին այսօր զամ մի ի մտաց մերոց եւ ի բանից՝ տրտմականացն անցից յիշատակք ի վեհավայր տաճարի աստ, ուր իբրեւ զնոր փիւնիկ վերաթեւեալ ի հրաբորբոք խարուկէ՝ ճախր առնու վերստին յԱրարատեանս դաշտի Ձերովդ ձգամբ եւ սիրասուն որդեկացդ ձեռնտու օժանդակութեամբ։ Մոռացօ՛ նք եղեցին եւ դառնութեան լեղւոյն եւ քացախի զոր արբէքն յայնժամ եւ քամեցէք, եւ պարարեսցին միտք մեր աներկմիտ յուսով՝ միայն ուղխիցն փափկութեան՝ զորս տացէ Տէր Ձեզ եւ մեզ առ հասարակ ըմպել ուրախութեամբ եւ ի տանս իւրում եւ յերանաւէտ օթեւանս երկնիցն Արքայութեան։

«Օրհնեսցի՛ ուրեմն, — գոչեսցեն ընդ մեզ որդիք Հայաստանի, — օրհնեսցի պսակ տարւոյ